ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ԲԵԴԵՎՅԱՆՆԵՐԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՍ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՋԱՒԱԿՍ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՍԱՐԳԻՍ ԵՒ ՌՈՒԹ ԲԵԴԵՒԵԱՆ, ՈՐ Ի ՆԻՒ ՋԵՐՍԻ, ԱՄՆ

Համայն հայութեան Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր ողջոյնն ու օրհնութիւնն ենք յղում Ձեզ՝ Առաքելական մեր Մայր Եկեղեցու եւ բարեպաշտ ժողովրդի արժանաւոր զաւակացդ:

Սիրելի Տէր եւ Տիկին Բեդեւեաններ,

Անձնապէս ճանաչելով Ձեզ եւ տարիներ շարունակ ականատես դառնալով հաւատոյ Ձեր բարի գործերին, Միածնի Իջման Սուրբ Սեղանի առջեւ գոհութիւն ու փառք ենք մատուցում առ Աստուած, որ ազգս հայոց օրհնուած է Ձեզ պէս բարեգործ զաւակներով, ովքեր հաւատարիմ մեր նախնեաց սուրբ աւանդներին, առաջնային նպատակ են համարում Հայրենիքին, Մայր Եկեղեցուն ու հարազատ ժողովրդին ծառայութիւն մատուցելը:

Սիրելի Տէր եւ Տիկին Բեդեւեաններ, աստուածահաճոյ Ձեր իրագործումները բարի համբաւ են բերում Բեդեւեան ընտանիքին եւ պատիւ՝ համայն մեր ժողովրդին: Տարիներ առաջ Դուք առաջիններից մէկը անսացիք Մեր կոչին եւ ամենայն սիրով ու պատրաստակամութեամբ Ձեր նիւթական աջակցութիւնը բերեցիք Սեւանի Վազգէնեան Հոգեւոր Դպրանոցին՝ նպաստելով կրթօջախի կայացմանը: Բարեյիշատակ Հայրապետի անունը կրող հոգեւոր դպրանոցը ժողովրդի հովիւ ու ծառայ կրթելու կոչմամբ ու առաքելութեամբ այսօր արդեն առատ պտուղներ է մատուցում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն ու հաւատաւոր ժողովրդին:

Մեծապէս ուրախ ենք, որ ի յաւելումն Ձեր բազում եկեղեցաշէն գործերի, Դուք անկեղծ սիրով ու իշխանական ոգով սպանձնեցիք նաեւ անկախ մեր Հայրենիքի Վանաձոր քաղաքում Եկեղեցական համալիրի կառուցման հովանաւորութիւնը՝ նպաստելով հայրենի մեր երկրի հիւսիսային շրջաններում հայորդեաց հոգեւոր վերազարթոնքին: Սրբավայրի լուսաւոր ու աղօթաբոյր հարկի ներքոյ բարեպաշտ հաւատացեալները դարեր շարունակ պիտի փառաբանեն Բարձրեալ Տիրոջը, զօրա-

նան հաւատով ու ազգային մեր արժէքներով՝ իրենց աղօթքներում մշտապէս երախտագիտութեամբ յիշելով եւ Աստծոյ օրհնութիւնը հայցելով Ձեզ եւ Բեղեւեան ընտանիքին:

Ի գնահատումն Մայր Եկեղեցուն եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին զօրակցելու Ձեր ազնիւ պատրաստակամութեան եւ արդեն իսկ բերած բազում ծառայութեանց, յղում ենք Ձեզ Մեր սէրն ու բարեմաղթանքները եւ Հայրապետական այսու Կոնդակով շնորհում Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատւոյ բարձրագոյն շքանշանը:

Վստահ ենք, որ հայրենապաշտ ոգով ու եկեղեցանուէր գործերով պիտի շարունակէք Ձեր ծառայութիւնը Տիրախնամ մեր Եկեղեցուն եւ հաւատաւոր ժողովրդին:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն է, որ Ամենախնամն Աստուած Իր Աջի հովանու ներքոյ պահի ու պահպանի Ձեզ՝ պարգեւելով քաջառողջ երկար կեանք, գործոց յարատեւ յաջողութիւններ եւ ամենայն բարիք:

«Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ եւ ամենեսեան. ամէն»:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 22-ն Մայիսի
Յամի Տեառն 2002 եւ ի թուին Հայոց ՌՆԾԱ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 88